ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ

ք. Երևան

«14» հուլիս 2021թ.

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1.1. Շուշիի տեխնոլոգիական համալսարանն (այսուհետ՝ Համալսարան) ի դեմս ռեկտոր Հ. Թոքմաջյանի, ով գործում է Համալսարանի կանոնադրության հիման վրա՝ մի կողմից և Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանը (այսուհետ՝ ՀՊՏՀ), ի դեմս ռեկտոր Դ. Գալոյանի, ով գործում է ՀՊՏՀ կանոնադրության հիման վրա՝ մյուս կողմից (այսուհետ՝ Կողմեր), հաշվի առնելով համագործակցելու փոխադարձ ցանկությունը, կազմեցին սույն համաձայնագիրը համագործակցության մասին:

1.2. Կողմերը համաձայն են կրթադաստիարակչական, գիտահետազոտական և ուսումնամեթոդական գործունեության ոլորտներում համատեղ փոխշահավետ ծրագրերի մշակմանը և իրականացմանը, դասախոսների և ուսանողների ակադեմիական փոխանակմանը, համատեղ հայտարարությունների և փաստաթղթերի ստորագրմանը, տեղեկատվական և մարզամշակութային միջոցառումների իրականացմանը և այդ նպատակին հասնելու համար արտահայտում են պատրաստակամություն՝ կիրառելու իրենց հաստատություններում առկա մտավոր և նյութատեխնիկական ներուժը:

2. ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ԽՆԴԻՐՆԵՐԸ

Կողմերը կապահովեն՝

2.1. Հայաստանի Հանրապետության (ՀՀ) և Արցախի Հանրապետության (ԱՀ) բուհական համակարգերում իրականացվող փոփոխությունների, իրավական փաստաթղթերի, ակտերի և միջոցառումների մասին տեղեկությունների փոխանակումը,

2.2. խորհրդատվական ծառայություններ կրթական գործընթացների վերլուծության և դրանց աջակցության նպատակով,

2.3. փոխադարձ մասնակցությունը երկկողմանի հետաքրքրություն ներկայացնող կրթական և հետազոտական ծրագրերի և կրթության ոլորտում նորմատիվ փաստաթղթերի քննարկումներին,

2.4. համապատասխան մասնագետների մասնակցությունը անցկացվող գիտաժողովներին, սեմինարներին, կոնֆերանսներին,

2.5. համալսարանների կառուցվածքային ստորաբաժանումների՝ ֆակուլտետների, ամբրոնների, առանձին գիտական և կրթական կենտրոնների համագործակցությունը,

2.6. ուսանողական ինքնավար կառույցների՝ ուսանողական խորհուրդների, ուսանողական գիտական ընկերությունների համագործակցությունը՝ ճանաչողական փոխայցելությունների, համատեղ գիտաժողովների, առարկայական օլիմպիադաների, մարզամշակութային և այլ միջոցառումների կազմակերպման ճանապարհով:

2.7. Տարբեր միջոցառումների, խնդիրների և ծրագրերի իրականացման ուղղությամբ ծավալուն և առարկայական համագործակցելու դեպքում կողմերի միջև երկկողմանի պայմանագրերի կնքում, որոնցով կկարգավորվեն համապատասխան աշխատանքների իրականացումը, կողմերի իրավունքներն ու պարտականությունները:

3. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

3.1. ՀՊՏՀ-ն կիրականացնի հետևյալ միջոցառումները՝

3.1.1. Համալսարանին կտրամադրի իր կողմից վերամշակված և թարմացված ուսումնական պլաններ, առարկայական ծրագրեր, ուսումնական և օժանդակ գրականություն,

3.1.2. իր հնարավորություններով կաջակցի Համալսարանում նոր տեղեկատվական տեխնոլոգիաների ներդրմանը,

3.1.3. իր հնարավորություններով կաջակցի Համալսարանի մասնագետների պատրաստման, պրոֆեսորադասախոսական կազմի համալրման, ատենախոսությունների պաշտպանության, ֆակուլտետների և ամբիոնների փոխգործակցության կազմակերպման գործընթացներին,

3.1.4. կմասնակցի համալսարանում կրթության որակի բարելավմանը, դասախոսական կազմի որակավորման պարբերական բարձրացմանը,

3.1.5. կմասնակցի համատեղ ուսանողական գիտաժողովների, առարկայական օլիմպիադաների, մարզական սպարտակիադաների կազմակերպմանը,

3.1.6. իր հնարավորությունների սահմաններում կմասնակցի համալսարանի նյութատեխնիկական բազայի ամրապնդմանը,

3.1.7. կնպաստի համատեղ ուսանողական ճամբարների և ամառային դպրոցների կազմակերպմանը ՀՀ-ում և ԱՀ-ում,

3.1.8. ՀՀ ուսումնական և այլ հաստատություններում, իր հնարավորությունների սահմաններում, կմասնակցի տնտեսագիտական մասնագիտությունների գծով համատեղ փորձառությունների կազմակերպմանը,

3.1.9. իր հնարավորությունների սահմաններում կնպաստի բուհական կրթությանն առնչվող միջազգային միջոցառումներին (գիտաժողովներին, սեմինարներին, խորհրդակցություններին) Համալսարանի դասախոսների մասնակցությունը,

3.1.10. իր հնարավորությունների սահմաններում կաջակցի Համալսարանի ինտեգրմանը ՀՀ բարձրագույն կրթական համակարգին՝ հետևողական աշխատանքներ կատարելով Բոլոնյան կրթական համակարգին լիարժեք ներգրավման ուղղությամբ,

3.1.11. հաշվի առնելով ԱՀ չճանաչված պետություն լինելու հանգամանքը, Համալսարանի շրջանավարտների արտերկրի բուհերում ուսումը շարունակելու նպատակով ՀՀ օրենսդրությանը համապատասխան միջոցներ կձեռնարկի նրանց ՀՊՏՀ դիպլոմներ (կրկնակի) շնորհելու համար,

3.1.12. Կողմերի կողմից կապահովվի Կողմերի ներկայացուցիչների փոխադարձ ներգրավումը ավարտական (պետական) քննությունների գործընթացներում:

3.2. Համալսարանը կիրականացնի հետևյալ միջոցառումները՝

3.2.1. կաջակցի համագործակցության հաջող զարգացմանը՝ ՀՊՏՀ-ին տրամադրելով անհրաժեշտ տեղեկատվություն իր առաջնահերթ ուսումնական կարիքների և խնդիրների վերաբերյալ,

3.2.2. ՀՊՏՀ-ին պարբերաբար կտեղեկացնի իր մոտ անցկացվող գիտահետազոտական աշխատանքների, սեմինարների, կոնֆերանսների, կլոր սեղանների, հանդիպում քննարկումների մասին և կնպաստի ՀՊՏՀ ներկայացուցիչների մասնակցությունը դրանց,

3.2.3. իր հնարավորությունների սահմաններում ՀՊՏՀ կողմից ԱՀ-ում իրականացվող միջոցառումների համար կապահովի համապատասխան պայմաններ,

3.2.4. կմասնակցի ԱՀ-ում, այդ թվում՝ վերաբնակեցվող շրջաններում, ուսանողների փորձառությունների համատեղ կազմակերպմանը և իրականացմանը,

3.2.5. ՀՊՏՀ և Համալսարանի սովորողների համար կկազմակերպի համատեղ ինտելեկտուալ և մարզամշակութային միջոցառումներ, ցուցահանդեսներ, շրջայց ԱՀ պատմամշակութային արժեքներ ունեցող տեսարժան վայրերով,

3.2.6. նյութեր կտրամադրի ՀՊՏՀ-ին Արցախի և նրա վերաբնակեցվող շրջանների տնտեսագիտական հետազոտությունների, հայրենագիտական, արցախագիտական և այլ հետազոտությունների իրականացման համար,

3.2.7. կիրականացնի ուսումնական պլանների թարմացում՝ աշխատաշուկայի պահանջներին համապատասխան, Համալսարանի համապատասխան մասնագիտություններով ուսումնական ծրագրերի կազմման գործընթացին ՀՊՏՀ-ի մասնագետների ներգրավում՝ որպես խորհրդատուներ,

3.2.8. ՀՊՏՀ-ի հետ կհամագործակցի ուսանողների և շրջանավարտների աշխատաշուկայում մրցունակության բարձրացմանն ու կարիերայի խնդիրների լուծմանն ուղղված ծրագրերի իրականացման ուղղությամբ՝ պարբերաբար համատեղ կազմակերպելով «Հանրապետական միջբուհական աշխատանքի տոնավաճառ», կոնֆերանսներ, սեմինարներ, խորհրդակցություններ և այլ միջոցառումներ,

3.2.9. Աշխատանքների արդյունավետությունը բարձրացնելու նպատակով ՀՊՏՀ-ի հետ համատեղ կձևավորի մշտական կամ ժամանակավոր կառույցներ, աշխատանքային խմբեր, խորհրդակցական մարմիններ, խորհուրդներ, հանձնաժողովներ:

4. ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐՈՎ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ՆՅՈՒԹԱԿԱՆ ԱՊԱՀՈՎՈՒՄԸ

4.1. Սույն համաձայնագրի կատարումն ապահովելու համար Կողմերը նշանակում են մեկական ներկայացուցիչ՝ պրոռեկտորի մակարդակով: Կողմերի ներկայացուցիչները պարտավորվում են համատեղ կարգավորել ընթացիկ փոխգործակցության հարցերը:

4.2. Կողմերը սույն համաձայնագրի շրջանակներում ֆինանսական պարտավորություններ չեն կրում:

5. ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐԻ ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ԺԱՄԿԵՏԸ, ԼՐԱՑՈՒՄՆԵՐԸ, ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ՈՒ ԴԱԴԱՐԵՑՈՒՄԸ

5.1. Սույն համաձայնագիրն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից և գործում է անժամկետ:

5.2. Սույն համաձայնագրի մեջ փոփոխություններն ու լրացումները կատարվում են Կողմերի փոխադարձ գրավոր համաձայնությամբ: Սույն համաձայնագրի փոփոխություններն ու լրացումները կազմվում են լրացուցիչ համաձայնագրով և դառնում են սույն համաձայնագրի անքակտելի մասը:

5.3. Սույն համաձայնագիրը կարող է լուծվել Կողմերի փոխադարձ համաձայնությամբ կամ Կողմերից մեկի նախաձեռնությամբ՝ ենթադրվող հրաժարումից ոչ ուշ, քան մեկ ամիս առաջ մյուս Կողմին գրավոր ծանուցելով:

5.4. Սույն համաձայնագրով չնախատեսված հարաբերությունների կարգավորման առումով Կողմերն առաջնորդվում են ՀՀ օրենսդրությամբ:

5.5. Սույն համաձայնագիրը կազմված է իրավաբանական հավասար ուժ ունեցող երկու օրինակից, յուրաքանչյուր Կողմին՝ մեկական օրինակ:

6. ԿՈՂՄԵՐԻ ՏՎՅԱԼՆԵՐԸ

«Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարան» ՊՈԱԿ	Շուշիի տեխնոլոգիական համալսարան
Հասցեն՝ ՀՀ ք. Երևան, Նալբանդյան 128	Հասցեն՝ ԱՀ, ք.Շուշի, Ա. Բեկորի 4
Ռեկտոր՝ Դ. ԳԱԼՈՅԱՆ	Ռեկտոր՝ Հ. ԹՈՔՄԱՋՅԱՆ